

և այդ բոլորը մտքերել են իրենց ստեղծագործությունների մեջ, որը թե մտքի և թե լեզվի հարստություն է:

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, հայ ժողովրդի որպես ազգ ձևավորվելու պրոցեսը և նրա ազգային լեզվի ստեղծումը տեղի է ունենում Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո:

Վ. Տերյանը գրում է. «Ես տաճկահայկական հարցի լուծմանը Թյուրքիայի սահմաններում չեմ հավատում»¹ Այդ հարցը լավագույն լուծումը նա համարում էր հայկական բոլոր շրջանների միացումը Ռուսաստանին. «Եթե դա հնարավոր է.—գրում է Տերյանը,—ուրեմն մեր ժողովրդի երկու խոշոր հատվածների միացումով ավելի ևս կգորեղանա այն կուլտուրական հոսանքը, որը փափաղելի է ինձ համար, եթե չլինի այդ, ապադայում էլ մենք պիտի ձգտենք այդ միացման: Տաճկաստանի վերածնությունը ևս չեմ հավատում, իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է: Եվ կապելով իմ լավագույն հույսերը առաջավոր ողջ գեմոկրատիայի հույսերին և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ևս չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու»²:

Տերյանը հայ ժողովրդի, նրա լեզվի, զրականության ու կուլտուրայի ծաղկումը կապում էր ողջ մեծ ժողովրդի ունությունն ապագայի հետ. «Երբ երիտասարդ Ռուսիան կթափահարե իր արծվի թևերը,—գրում է Տերյանը,—երբ երկրի կենդանի ուժերը զարնան ելման ջրի նման կշարժվեն հզոր ու խնդուն»³:

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության լույսի տակ անհրաժեշտ է շարունակել պայքարը հայոց լեզվի մաքրության ու անաղարտության համար, հստակ ու պարզ մտածողության համար: Պետք է ձգտել լեզվի այնպիսի կլասիկ պարզություն, հստակություն, ինչպիսին մեզ սովորեցնում են մարքսիզմի կլասիկները, ինչպիսի լեզվի սքանչելի օրինակ է մեր մեծ ուսուցիչ ընկեր Ստալինի լեզուն:

ԸՆԿ. Մ. ՄԿՐՅԱՆԻ ԵՂՈՒՅԹԻՑ

Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, որ լեզուն հաղորդակցման գործիք լինելով, դրա հետ միասին հանդիսանում է հասարակության պայքարի ու զարգացման գործիք, որ լեզուն անխղելիորեն կապված է մտածողության հետ, որ լեզուն ազգային կուլտուրայի ձևն է: Նշանակում է լեզվի մաքրության հարցը մեզ համար չափազանց կարևոր քաղաքական-հասարակական նշանակություն ունեցող հարց է և մեր լեզվաբաններն ու գրականագետները չեն կարող անտարբեր մնալ դրա նկատմամբ: Պատմությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման գործում ղեկավարվածական զրականությունը խոշոր նշանակություն է ունեցել և ունի: Երա համար էլ հատուկ ուշադրություն պետք է դարձնել մինչև հիմա էլ մեր զրոյնների մոտ հանդիպող գրաբարի և բարբառների սխալ օգտագործման, մեր հարուստ լեզվի բառարանային ֆոնդին և քերականական կանոններին չտի:

¹ Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 182:

² Նույն տեղում, էջ 182:

³ Նույն տեղում, էջ 194:

ըստ պետելու փաստերին, Հայտնի է, որ մեր գրողներից շատերը իրենց գործերում հերոսներին տիպականացնելու և պատմական կոլորիտ ստեղծելու համար փոխանակ ուշադրություն դարձնելու նրանց ներքին էություն՝ բնավորության, մտածողության, վարվեցողության և լեզվի ոճավորման վրա (ինչպես այդ տեսնում ենք, օրինակ, կլասիկների մոտ, որոնցից պետք է սովորել), դիմում են հեշտ և գեղարվեստականության տեսակետից անօգուտ, լեզվի մաքրության տեսակետից անընդունելի միջոցի, լայնորեն օգտագործում են գրաբարը (նույնիսկ քերականական ձևեր) և բարբառները, լեզվի մաքրության հարցի կապակցությամբ անհրաժեշտ է անդրադառնալ հայոց լեզվի պատմության մի շարք հարցերի, որոնց ճիշտ լուծումը անկասկած կունենա իր հետևանքները, ՀԳ(Բ)Պ կենտրոնական կոմիտեի քարտուղար ընկեր Գր. Հարությունյանը մեր պարտիայի 15-րդ համագումարում տված իր զեկուցման մեջ ասաց, որ դեռ մեր լեզվաբանները ընկեր Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատություններից հարկ եղած հետևությունները չեն արել, Վերանայված չէ գրաբարի սխալ, հին զնահատականը, շարունակվում է հայոց լեզվի բաժանումը արևելահայերենի և արևմտահայերենի, միջոցներ ձեռք չեն առնում հայոց լեզուն խորթ ներմուծումներից մաքրելու ուղղությամբ, րացականում է բավարար պայքարը մեր գրողների երկերի լեզվի մաքրության համար:

Անկասկած լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված այս դիսկուսիան խոշոր նշանակություն կունենա դրված հարցերը լուծելու և պարզաբանելու իմաստով:

Ընկեր Ղափանցյանը իր զեկուցման մեջ շատ հետաքրքրական և կարևոր դիտական հարցեր շոշափեց, Պետք է ասել, որ նա միանգամայն ճիշտ կերպով դրեց այն խնդիրը, որ մեր լեզվի մաքրության հարցը ուսումնասիրելիս պետք է օգտվենք այն համաշխարհային նշանակություն ունեցող փորձից, որ տալիս են մեզ ոուսաց լեզուն և ոուս լեզվաբանների ուսումնասիրությունները: Ընկեր Սեվակն ընկեր Ղափանցյանի այս տեսակետը սխալ մեկնարանեց:

Անցնելով դրաբարի հարցին, ես որոշ կետերում համաձայն չեմ ընկեր Ղափանցյանի պնդումների հետ: Ընկեր Ղափանցյանը կարծում է, որ դրաբարը հայ պետականության քայքայման հետ կրախի է ենթարկվել, ինչպես այդ պատահել է մոնղոլերեն միասնական լեզվի հետ: Այդ դեպքում պետք է ընկեր Ղափանցյանը ասեր նաև, որ դրանից հետո բարբառների հիման վրա առաջացան առանձին ինքնուրույն լեզուներ, բայց միթե այդպիսի բան է տեղի ունեցել, միթե միջին հայերենը կամ աշխարհաբարը նոր և առանձին-առանձին ինքնուրույն լեզուներ են—այդ զիվար է ասել, Անկասկած պետության վերացումը 5-րդ դարում, իր հետևանքները ունեցել է գրաբարի մահացման պրոցեսի վրա, բայց պիտի նկատի առնենք այն հանգամանքը, որ 10-րդ դարում հայ պետությունը արդեն վերականգնված էր, մինչդեռ դրաբարի կրախը ընկեր Ղափանցյանը հենց այդ դարից է սկսված համարում: Պետք է կարծել, որ դրաբարի մահացման պրոցեսը սկսվել է 5-րդ դարի վերջերից, ավելի նկատելի կերպով՝ 6-րդ դարից, երբ գործում էին այսպես կոչված հունարանները, Գրաբարի

մահացման պրոցեսը իր ժամանակին ընդհանուր գծերով ճիշտ է պատկերացրել Միքայել Նալբանդյանը, երբ գրել է Պատվելի մազիստրոսը (խոսքը Մսերյանցի մասին է). և նրա ոչ աննշան ու քաջահմուտ հայկաբանները երբ և որպիսի՞ փաստերով հաստատեցին, թե հինգերորդ դարու զրոց լեզուն եղել է Հայաստանի հին լեզուն, և մեր ժամանակակից ազգի բարձրագույն ուղիի հեռացել է զրոց լեզվից, այնչափ խանգարվել է և տղեղացել է. սորա հակառակը կարելի է ասել, որ այժմյան ժողովրդի լեզուն զրոց լեզվից առաջ է եղել և որչափ զրոց լեզուն հեռացել է ազգի կենդանի լեզվից, այնչափ կորուսել է յուր սկզբնական հատկությունը, ստրկանալով այլ մերձավոր ազգերի լեզուների տղեղացության: Նալբանդյանի այս տեսակետի ողին այն է, որ զրաբարը ժամանակի ընթացքում հեռացել է ժողովրդի կենդանի խոսակցական լեզվից և մահացել: Եվ այսպես՝ խոսակցական լեզուն ժամանակի ընթացքում զարգացել է իր ներքին օրենքներով և աստիճանաբար անցել է նոր որակական զրույթյան:

Դալով զրաբարի բառային ֆոնդի օգտագործման, ինչպես և որոշ ոճերի օգտագործման խնդրին, դա սկզբունքորեն չի կարելի ժխտել: Բայց պետք է խստորեն դատապարտել այն հիվանդագին չափերով կատարելը, ինչպես այդ նկատվում էր անցյալում Վարուժանի մոտ: Եթե վերցնենք որոշ բառեր, որոնք միանգամայն հասկանալի են և օգտագործման դեպքում չի զղացվի զրանց խորթությունը աշխարհաբարի նկատմամբ — դա իհարկե, պախարակելի երևույթ չի կարող համարվել: Օրինակ՝ Թումանյանը «Ախթամար» լեզենդում Նարեկացուց վերցնելով օգտագործել է «ծածաղախիտ» բառը («Ծածաղախիտ Վանա ծովի...») որը միանգամայն օրգանապես ձուլվել է նրա լեզվի և պատկերի հետ, որովհետև զեղեցիկ ու հասկանալի բառ է և ոչ մի խրթնաբանություն չի ստեղծում, արխայիզմի տպավորություն չի առաջացնում: Բայց, օրինակ, վատ է, երբ ընկեր Դեմիրճյանի մոտ «Վարդանանքում» հանդիպում ենք «եղծիլ», «քեշին» և այլ միանգամայն անհասկանալի բառեր («զրում եմ եղծը պարսից քեշիլն»): Ի դեպ, Դեմիրճյանի այդ, շատ տեսակետից հաջող վեպի լեզվի մասին պետք է ասել, որ բավական թերություններ ունի: Դեմիրճյանը կանգնած է լեզվով պատմական կոլորիտ ստեղծելու միանգամայն սխալ ճանապարհի վրա: Նա ոչ միայն գործածում է արխայիկ անհասկանալի բառեր, այլև զրաբար փրականական ձևեր, և որ ամենից ավելի ցավալին է, նա շուտ է տալիս աշխարհաբարի սովորական շարադասությունը և ամեն քայլափոխին աշխատում է նախադասությունը կառուցել զրաբար շարադասությամբ («առաջի մարդկան ուրացավ հայրենին», «կոչ կոչենք հանուր մարդկություն», «ես ապստամբ եմ և չեմ կույր և անիմա»):

Այժմ մի քանի խոսք բարբառների օգտագործման մասին: Այստեղ, իր ելույթում ընկեր Դեմիրճյանը մի կատարելապես անընդունելի տեսակետ առաջ քաշեց, որը կարող է մեր երիտասարդ գրողներին շատ վնասել և սխալ կողմնորոշում տալ: Նա այն միտքը հայտնեց, որ հեղինակը պատասխանատու չէ իր հերոսների լեզվի համար, որ գործի հերոսները պետք է խոսեն ճիշտ այնպես, ինչպես խոսում են կյանքում: Այս տեսակետը դուռ է բաց անում լեզվական նատուրալիզմի, բարբառների և զանազան ժարգոնային արտահայտությունների առաջ, Բարբառներից, իհարկե, պետք

է և կարելի է օգտվել, իմաստավոր և գեղեցիկ ասացվածքներ, ոճեր և առանձին բառեր, բնութելով, խիստ ճաշակով և նրբանկատությամբ, Բայց բարբառի այնպիսի չափերի և բնույթի օգտագործում, որ տեսնում ենք օրինակ՝ բնկեր Բաշտենցի «Սողեզան» վեպում—խիստ դատապարտելի է, «Ե ողա Մհեր, մկա ծիծեռնակ կծրտի քու բերան»,—ասում է Դաշտենցի հերոսներից մեկը, Երեակայեք, որ Անուշն ու Սարոն (որոնք նմանապես գյուղացիներ են) իրար հետ խոսելին նման լեզվով ու ոճով, ի՞նչ կմտար Թումանյանի անմահ պոեմի գեղարվեստական հմայքից, Բարբառների օգտագործման հարցի կապակցությամբ շատ բնկերներ արտահայտվեցին այսպես կոչված արևելահայերենի և արևմտահայերենի մասին, Ընկեր Ստալինը մեզ սովորեցնում է, որ մի ազգ չի կարող ունենալ երկու լեզու. հետևաբար սխալվում են այն լեզվաբանները, երբ գտնում են, որ մենք երկու ազգային պրական լեզու ենք ունեցել, Այս հարցը ՀԿ(Բ)Պ 15-րդ համագումարում միանգամայն ճիշտ արժարժեց ընկեր Ջավեն Դրիգորյանը:

Հայոց լեզուն սովետական շրջանում շատ է հարստացել: Մեր գրողների խնդիրն է ամբողջությամբ տիրապետել այդ հարստությանը և անգույն կերպով աշխատել մեր լեզվի մաքրության վրա:

ԸՆԿ. Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ընկերներ, հայոց լեզվի մաքրության և ժամանակակից հայերենի լեզվաշինարարության հարցերը ունեն չափավոր կարևոր նշանակություն, Առանձնահատուկ կարևորություն ունի ընկեր Ստալինի լեզվաբանական ուսմունքի լույսի տակ՝ հայոց լեզվի մաքրության և հայերենի լեզվաշինարարության թեորիական սկզբունքների ճիշտ մշակումը, առանց որի հնարավոր չէ մաքսիմալ-լենինիզմի կլասիկների երկերի թարգմանությունների ճիշտ կազմակերպումը: Թարգմանական դրականությունը և առանձնապես մաքսիմալ-լենինիզմի կլասիկների երկերը, որոնք տարածվում են տասնյակ հազար օրինակներով և դարձել են սեղանի պիրք, հսկայական ազդեցություն ունեն մեր լեզվի պարզացման վրա, հարստացնում են այն: Թարգմանիկների կլասիկները մեր աշխատավորությանը տալիս են ոչ միայն իդեալական գանձեր, այլև լեզվական գանձեր: Ուստի մաքսիմալ կլասիկների երկերի թարգմանությունը հայերենի՝ լեզվաշինարարության կարևորագույն գործոններից մեկն է և զրա համապատասխան այն պետք է արժանանա լեզվաբանության ուղղորդությանը: Մինչդեռ պետք է ասել, որ մեր լեզվաբանները թարգմանության պրոբլեմներից հեռու են կանգնում, պործի ամբողջ ծանրությունը թողնելով պրակտիկների՝ թարգմանիչների և հրատարակիչների վրա: Ոչ մի թարգմանություն չի կարող կատարվել լինել, եթե նա չի հենվում լեզվաշինարարության թեորիական ճիշտ բաղադրի վրա: Դժբախտաբար մենք չենք կարող ասել, որ այդ բաղադրանքան ամուր էր, որ ուղղություն տար մեր թարգմանիչներին ու հրատարակիչներին: Մենք փորձել ենք այդ աշխատանքում ներգրավել լեզվաբաններից ոմանց, բայց դա սխալմատիկ բնույթ չի կրել: Ես կարծում եմ, որ մեր այս խորհրդակցության արդյունքներից մեկն էլ այն պիտի